

Համաձայն «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
 Վարչության 11.10.2023թ. որոշման
 Գործում է 01.11.2023 թվականից

ABB – ՓՄՁ Շրջանառու կապիտալի ֆինանսավորում

Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող վարկային գծերի պայմաններն ու սակագները

1		Պայմաններ
1.1	Արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար
1.2	Տարեկան անվանական տոկոսադրույք	<ul style="list-style-type: none"> ✓ Մինչև 6 ամիս մարման ժամկետի դեպքում՝ նվազագույնը՝ ՀՀ դրամ՝ 16%, ԱՄՆ դոլար՝ 14% ✓ 6 ամսից մինչև 1 տարի մարման ժամկետի դեպքում՝ նվազագույնը՝ ՀՀ դրամ՝ 18%, ԱՄՆ դոլար՝ 16% Առավելագույնը՝ ՀՀ դրամ՝ 20%, ԱՄՆ դոլար՝ 18%
1.3	Չօգտագործված մասի նկատմամբ հաշվեգրվող տոկոսադրույք	0-2%
1.4	Պարտավորություն/ գրավ հարաբերակցություն	-
1.5	Ժամկետ	1- 12 ամիս
1.6	Մարման եղանակ	Տոկոսները՝ ամենամսյա, մայր գումարի մարումները՝ կախված բիզնեսի առանձնահատկություններից
1.7	Գումար	1,000,000 ՀՀ դրամից մինչև 40,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք այլ արտարժույթ
1.8	Վաղաժամկետ մարման միջնորդավճար	Մինչև վարկի/չվերականգնվող վարկային գծի գործողության ժամկետի կետը վաղաժամկետ մարման դեպքում (բացառությամբ այն դեպքերի, երբ մարումը կատարվում է բանկի պահանջով)՝ վաղաժամկետ մարվող մայր գումարի 1,5 տոկոսի չափով:
2		Բանկի միջնորդավճար
2.1	Դիմում-հայտի ուսումնասիրության միջնորդավճար	10,000 ՀՀ դրամ
2.2	Վարկային գծի սպասարկման միջնորդավճար	Պայմանագրի գումարի 0,5%, նվազագույնը՝ 15,000 ՀՀ դրամ
2.3	Վարկային միջոցների կանխիկացման միջնորդավճար	Համաձայն հաշվից միջոցների կանխիկացման Բանկում գործող սակագների
3		Ապահովվածություն
3.1	Գրավի առարկա	✓ Իրավաբանական անձ հաճախորդների դեպքում՝ 10% և ավելի բաժնեմաս ունեցող սեփականատերերից որևէ մեկի և/կամ տնօրենի

		անձնական երաշխավորություն ✓ Անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ վերջինիս ընտանիքի անդամ՝ հանդիսացող որևէ մեկի և մեկ այլ անձի անձնական երաշխավորություններ
4	Վարկառուի նկատմամբ պահանջներ	
4.1	Վարկառու	Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր
4.2	Վարկառուին ներկայացվող պահանջներ	ա) Առնվազն 2 տարվա գործունեության փորձ բ) Վերջին 12 ամիսների ընթացքում վարկային պարտավորությունների գծով ընդհանուր ուշացրած օրերի քանակ՝ ոչ ավել, քան 24 օր գ) Որոշման կայացման օրվա դրությամբ ժամկետանց պարտավորությունների բացակայություն. դ) Հաշիվների վրա կալանքի բացակայություն
4.3	Լրացուցիչ պայման	Վարկառուի ֆինանսական հաշվետվությունների վերլուծության արդյունքում ստացվող ֆինանսական ցուցանիշները պետք է բավարարեն Բանկի պահանջներին:
5	Երաշխավորի նկատմամբ պահանջներ	
5.1	Երաշխավոր	ՀՀ-ում կամ ԼՂՀ-ում գրանցված ռեզիդենտ իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, ֆիզիկական անձ
5.2	Երաշխավորին ներկայացվող պահանջներ	<ul style="list-style-type: none"> • Առնվազն 6 ամսվա անընդմեջ գործունեություն ծավալած իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր և 21-63 տարեկան ֆիզիկական անձ. • Ժամկետանց պարտավորությունների բացակայություն (ներառյալ տրամադրված երաշխավորությունների գծով). • Նախորդ 12 ամիսների ընթացքում վարկային պարտավորությունների գծով ընդհանուր ուշացրած օրերի քանակը չպետք է գերազանցի 24 օրը (ներառյալ տրամադրված երաշխավորությունների գծով), (եթե Երաշխավորի գործունեության ժամկետը 1 տարուց պակաս է, ապա վարկային պարտավորությունների գծով ժամկետանց օրերի քանակը չպետք է գերազանցի փաստացի գործունեության օրվանից սկսած յուրաքանչյուր ամսվա համար 2 օրը՝ կուտակային սկզբունքով):
6	Լրացուցիչ պայմաններ	
6.1	Մինչ 31.10.2023թ. ներառյալ տրամադրված դրամական պարտավորությունների դեպքում՝ <ul style="list-style-type: none"> • Ժամկետանց տոկոսների գծով Բանկը Վարկառուից գանձում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար ժամկետանց գումարի 0,13%-ի չափով, • Դրամական պարտավորությունը պայմանագրով նախատեսված ժամկետներում չմարվելու դեպքում պայմանագրով նախատեսված տոկոսների հաշվարկը դադարում է և այդ օրվանից ժամկետանց գումարի նկատմամբ մինչև ժամկետանց պարտքի փաստացի կատարման օրը հաշվարկվում են տոկոսներ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով, 	

¹ Ընտանիքի անդամ են հանդիսանում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, քրոջ, եղբոր ամուսինը և երեխաները

01.11.2023 թվականից տրամադրված դրամական պարտավորությունների դեպքում՝

Բանկն իրավունք ունի՝

- Ժամկետանց վարկի նկատմամբ շարունակել կիրառել Պայմանագրով նախատեսված տոկոսի հաշվարկումը:
- Կիրառել տույժ՝ ժամկետանց տոկոսագումարի և ժամկետանց գումարի նկատմամբ 0.13%-ի չափով ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար: